ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2025 թվականի N 0620-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերի <<ա>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Շմավոն Եփրեմյանի 17.04.2023 թվականի թիվ 2344 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Շմավոն Եփրեմյանին և Անի Կոստանյանին ընդհանուր բաժնային սեփականությամբ պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում 04-001-0063- կադաստրային ծածկագրում հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունը՝ 22.7 քմ ներքին և 23.4 քմ արտաքին մակերեսով ճանաչել օրինական:

2.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 23.4 քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 4632 ՀՀ դրամ ընդհանուր՝ 108389 (հարյուր ութ հազար երեք հարյուրութսունիննը) ՀՀ դրամ:

4.Շմավոն Եփրեմյանին և Անի Կոստանյանին ընդհանուր բաժնային սեփականությամբ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի քաղաք Արմավիր 04-001-0063- կադաստրային ծածկագրում ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Հանրապետության փողոց 14/12:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023GJL3YK:

6.Ուժը կորցրած ճանաչել 2025թ մարտի 24-ի թիվ 0422-Ա որոշումը:

7.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մայիսի 14
ք. Արմավիր